

ՔԱՐԺԱՆՈՐԻ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	12 Ժր.
Տարեկան	6 "
Վեցամսեայ	15 "
Սրբապատկանի համար տարեկան	8 "

Անկերիկայի համար	3 ՏՂ.
Տարեկան	1.50 "

Մանուգրան տպր առաջին երեսին հատուկ 10 ս. իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է. երեքին աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կրուի:



R. P. Kalemcarian, Mechitharistengasse W. 4. Vienne

Կամակ եւ որում զ'կիչ հիւրագրութեան հասցիին

Редакция на вѣстникъ "Шаржумъ" Варна

Redaction du journal "Charjoum" Varna (Bulgarie)

Սրբապատկանի համար ձեռք (20 ՍԱՆԹԻՄ) (Պուշկարիոյ համար ձեռք (15 ՍԱՆԹԻՄ)

Գրութիւնք եւ չեւ տրուի

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԻՏՐՈՒՄԻ ԶՈՐԵՔԻ ԱՐԺԻ ԵՒ ՇԱՐՋՈՐ ՕՐԵՐԸ

ՇԱՐՋՈՐԻ Ի ՔԱՐԺԱՆՈՐԻ ԳՐՈՒՄԸ ԲԱՏԵՆԳԻՆԸ ՊԵՏԻ Ե ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐԷ

ԻՆՉՈՒ ԴԱՆԴԱՂ ԵՆՔ ՅԱՆՍԶԴԻՍՈՒՄ

Թերեւս ոչ մի ժողովրդի մէջ անհատական մեծամտութիւնը և անփառութիւնը այնքան զարգացած չէ, որչափ հայերիս մէջ. թէեւ հայ անհատը օտարի առջեւ միշտ ինքնիրեն չափից աւելի պղտիկցնողի գիրքն ունի, որը և յատուկ է ստրկացած ցեղերի ներկայացուցիչներին:

Այդ անհատական մեծամտութիւնը և անփառութիւնը աւելի խտանում է մանաւանդ այն հայ անհատների մէջ, որոնք այս կամ այն ձևով հանրային յառաջադիմութեան ծառայող գործերով են զբաղվում: Օրինակի համար, վերջերք մեր զարգացող ուսուցիչներին մեծ մասին, որոնց մտաւոր պաշարը գրեթէ զերօր է հաւասար, իսկ բարոյական ըսկզբունքները միջին զարբերմամբով են պատած և քննադատեցէք դրանց. ոհ, Սասաւած իմ ինչ փութորիկ կը բարձրանայ. յանկարծ ճնջողակի, այն էլ բորբոնած ուղեղով, պատելին կամ վարժուհին մի պետաւորացի կը դառնայ, ու շանթեր, ոչ սխալվիցի գրանք շանթեր արձակելու ընդունակ չեն, օձային լորձիւնքներ կը թափէ այս ու այն կողմ, ճիգեր թափելով ապացուցելու որ ինք անփոխարինելի մանկավարժ է, ազգին ծառայել է, հասկացէք ազգի զաւակներին առանց դաւակնի մորթոտել է, և յանդգնում են իրեն քննադատել: Աւ հայ հասարակութեան ոչխար, փչացած մասը փչելը հաւաքելով ազգի համար սրտացաւի վերարկուն ուսերին գցած մէջտեղ է գալիս յարձակման կամ քննադատութեան ենթարկված ողորմելի պաշտօնհային պաշտպան հանդիսանալու:

Քննադատեցէք ստորահոգի գըռնիկ մարդկանց, որոնք լայր շուրթերն են ունենում գրիչը վերցնել հայ հասարակութեան բարոյական դասեր կարգալ:

ինչպէս օրինակի համար Տ. Ճրգնաորեանը, «Հայաթերթի խմբագիրը, որ վերջերս թունդ յեղափոխական յոգւածներ է գրում նախորդ մեղքերը իբր թէ քաւելու համար, կը բորբոքի ինքը այդ հայ կեանքի ամենատար ախպերից մէկը, և կը զրանվեն մարդիկ, որոնք կասեն, «ախպար, ինչ կուզէք, մարդը չուզիք է. զլջացեր է այժմ կուզէ քաղաքական ըլլալ ազգին ծառայելու: Խեղճեր, դեռ այնքան տհաս. այնքան անսկզբունք մարդիկ են որ չեն կարողանում բարձրել թէ՛ աճնարարձր գաղափարները իսկ ձգնաւորաններին նման մարդկանց բերանից դուրս եկած միջոցին ազտտովում և ցեխոտվում են. ու բացի դրանից, նրանք պատճառ են դառնում երիտասարդ սերնդի մէջ համոզում ստեղծելու որ հայ հասարակութեան մէջ կարելի է ամեն ստորնութիւններ Լատարել, ամենարարձր սրբութիւնները տարիներով սարքի տակ տալ և մի օր վեր կենալ ու անմիտ խօսքերով, կոկորդիլոսի արցունքները աչքերին ազգասէր և յեղափոխութեան բարեկամներ կայանալ գէշէֆտներ մէջ ձեռք բերել չը յաջողած անթիմները ժողովրդի նուրբ զգացումներին հետ խաղաղով ձեռք բերել...»

Քննադատել պէտք է և դերասաններին, մանաւանդ երբ նրանք, կրկին իրենց Մեծ շահի համար, ազգի ու է հիմնարկութեան նպատակը համար են խաղում: Զր պէտք է ասել որ այսինչ գերասունը ոչ մի բարոյական իրաւունք ունի յանդգնելու մտտեալ այն գերեզման, որոնց Բոսսիները, Սիւլիները, Սալվիները, Սարաբերիները, Սալվիները, Սալվիները, Սալվիները սրբազան պատկառանքով են մտտեցել իրենց հանձարներով և տառնեակ տարիների թափած ջանքերով բռնաւորված և ահ ու սորսափ են զգացել Սեկսպիտի անմահ ախպերը փչացնելու կաւկածի, վախի առջեւ: Զէ, չը պէտք է քննադատել, որովհետեւ ինչ որ ողորմելիներ, փոքրիկ ուղեղի և սրտի տէր մարդիկ, կամ գեղարեստի, իրական գեղարեստի վրա գաղափար չունենցող զէնդ ինքն, կրկին բարեացակամի վերարկու հագած մէջ տեղ կը գան փրկելու այն ինչ որ փրկութիւն չունի, ծածկելու այն ինչ որ չէ կարելի ծածկել:

Կը յուզվեն և իրենք դերասանները, որովհետեւ խեղճերը չի գացել են գոհիկ, աւելի գաղանանցներ և միմտական տեսարաններ զարմ մարդկանց գովասանքներով: Բայց որի փոյթը... Պէտք է պարտականութիւնը կատարել:

Սհա այս է ներկայացնում մեր կեանքը: Քննադատվող պրօնքը, ուռչում են, սրբվում են. չեն զգում թէ քննադատվում են, որովհետեւ մեծ ցանկութիւն կայ գոնէ զրօնքը մէկի վերածել, մեր յառաջադիմութիւնը հաստատուն չիմերի վրա գնելու համար, որի սեղանի մօտ պէտք է ջարդ ու փշուր լինեն լուրը, ովքեր անպատրաստ մտտեանում են նրան: Իրանց պաշտպանները կատարում են էլ տակի, որովհետեւ քննադատները գոչ են տալիս թէ այդ պաշտպանները տգէտներ, գոհիկներ, կեղծ քաղաքակիրթներ են, որոնք գաղիք կապելով շահամուտ ստոր, փոք հացի համար ճիճուի պէս սողացող անարժան հանրային գործիչների հետ, զիտակցաբար թէ անգիտակցաբար, կասեցնում են մեր հասարակութեան յառաջադիմութեան ուղիղ ընթացքը և ստեղծում մի մթնոլորտ, ուր կը խեղդվին թէ գիտութիւնը, թէ գեղարեստը, թէ վեհ գաղափարները, թէ փրկարար ու շինիչ սկզբունքները և թէ մեր ազգային վերածնութիւնը:

ՕՐԵՆՆՈ

«Շարժում» Նախորդ թ. ոյն մէջ «Օրէնն» Ներկայացման մասին երեւցած քննադատութիւնը Պ. Պապանեանի եւ իր խմբին վրայ խիստ բռն սզդեցութիւն մը գործեր է: Այս անթիւ քաղաքին բոլոր հայ հասարակութեան մէջ և նոյնիսկ դերասաններու հետ կատարուած վիճարանութիւնները զիս այն եղրակացութեան հասուցած ըլլալով որ, այդ խաղին ամենախրեւոր գերբը ստանձանող դերասանները դեռ «Օրէնն» ամբողջութեամբ կարգացած իսկ չեն, եւ հետեւաբար, բացարձակապէս անկարող են իրենց դերերը բմբնելու: անոնց բարդ ու կնճոտ հոգեբանութիւնը հասկնալու: — հարկ կը համարեմ ամփոփ վերլուծումն ընել Շէքսպիրի այդ գրուածքին, հետեւելով եւրոպական ամենէն նշանաւոր քննադատներու յայտնած կարծիքներուն:

Անգլիական թատրոնը այսարի մանէն տարօրինակ ու եզակաւորն իսկատիպ թատրոնն է: Մենով ժողովրդի մը մէջ, որ գերազանցօրէն պատերազմիկ էր, որկրամու, արբեցող ու կոռուսէր, անիկա պարտաւորուեցաւ մարդը թմին վրայ արտայայտել իր փափաքներուն մէջ ծայրայիղութեան մղուած, սանձարձակ, գրէճէ լիմար. Դեռ մինչեւ այսօր, Անգլիացին պահած է իր սկզբնական գլխաւոր նկարագիրը, մեղակեաց ու կոռուսէր, ուր վիււորեալ կիրքերը կը տիրապետեն արդի բարբերու բարեկեցութեան ու կանոնաւորութեան տակ: Երիտասարդ հարուստները, Քէմպրիի համալսարանը աւալաւիէ ետքը, Ափրիկէ կերթան փիղ որսալու, վրաններու տակ կապրին, ճիով ցանկապատներէ կը ցատկեն, ինքզինքնին վրատագի կենթարկեն: Մինչեւ իսկ զարգացական տղաքը այնքան անհանգարտ, ծեծկուող ու անընկճելի բռնութեան տէր են որ, յաճախ, դանոնք զսպելու համար, գաւազան հարկ կըլայ: Երեւակայեցէք ինչ պէտք էր ըլլար այս ժողովուրդը մէջ դարուն, երբ ամբողջ Անգլիան մէկ բանակ եղած էր, եւ ամէն մարդ զինուոր, այս սզզը՝ զոր «Եւրոպայի ամենէն պատերազմիկ, ամենէն անարկու, անգլիական վարիսի գազանները» կորակէին:

Ու դատեցէք թէ ինչ կրնար ներկայացնել թատրոնը՝ այս տեսակ բռնազդներով կազմուած հասարակու:

Վ.Ս.Գ.Ս

Թեան մը մէջ, կեանքի գաղափարը, գրեթէ միշտ, ոչմերգական տեսարանի մը կը յանգի. մահը միշտ անոր քովն է, ինչպէս նաեւ տանջանքը: Բնկերութեան մէջ, կարգ կանոնի գաղափարին անմիջապէս կը յաջորդէ կառախնատի գաղափարը: Ճահճային, մտախառնատ, տղոտ ու արևուտ արդ երկրին մէջ, ուր անձրեւը փոթորիկն ու քամին անպակաս են, պայծառ ու հեշտալիր գաղափարները չեն կրնար տեղ գտնել: Խթարամած ու սպառնազին մտախառնը իրենց միտքը կը ծածկէ, ինչպէս իրենց երկիրը, եւ ուրախութիւնը՝ արեւուն պէս՝ ուժգնորէն ու ընդհատարար միայն մտախառնը կը ծածկէ, «Նրազի թախմազին», ինչպէս Համիթի պէս, կեանքի սեւ մտածումին մէջ, որ մինք այսօր կը թապը, տիկինք, կը գրտանք, կը գրչենք կահանամարձ ու շնչահեղձ. ահա իրենց ըմբռնումը մարդուն կեանքին վրայ, ազգային իտէալ՝ որ թատրոնը կը լինէր փորձաքննարկով ու յուսահատութեամբ, որ ջարդ ու տանջանք կը պարզէր աչքիդ առջեւ, որ ոճիւրն ու խօսանքը կը շտայլէր, որ ամէն բանի վախճանը մահը կը ցուցնէր:

Անգլիական թատրոնի մասին այս մէկ երկու խօսքերէն ետքը, երբ Շէքսպիրի կանցնինք, անհուն պատկառանքով ու անսպառ երկով գտնուած միայն պէտք է մտենանք այդ հոյակապ հանճարին, որուն հոգին միմիայն վսեմի ոլորտներուն մէջ կը սաւառնի, որ խանդավառութեան յանկարծ և զզլիմիջ արագութեամբ կը իրոյանայ տաղանակին մէջ, յետոյ հանդարտութեան, յափշտակութեան և յուսահատութեան մէջ, բոլուն, անողորմ ու անակնկալ ստուգութիւնով: Քիչ բանաստեղծ այնքան փոփոխութիւն կը-

րած է, որքան Շէքսպիրը, բայց իր ըստը գործերուն մէջ՝ անիկա պահած է իր հանճարին մեծութիւնը: Փոփոխ և ուժգին բանաստեղծութեանց խառնուրդ մը, միացած ձեւի գեղեցկութեան, կեանքի մանրազնունի գիտողութեան, գաղափարներու զեզուն առատութեան և տիպարներ ստեղծելու հրաշալի կարողութեան. ահա Շէքսպիրի իր հանճարին գլխաւոր գիծերովը, որ իրաւար կոչուած է. Աստուծի ևսփր երկրորդ ստեղծող:

Ու այս անձնան հանճարին, տեղումներէն մին էր, զոր Պապական խումբը սնցեալ օր ներկայացնելու յանդիմութիւնն ունեցաւ:

Հիմա, տեսնենք ի՞նչ է Օթէլլոն: «Ամառ գիշերուան մը երազին» և, «Ռոմէո և Ջիւլիէթ»էն վեց տարի ետքը՝ էր որ, Շէքսպիրը «Օթէլլոն» գրելից: Շէքսպիր մեծ կիրքերն է որ ձեռք կառնէ. «Կիրքեր» զորս պիտի զգայ իր ամբողջութեանը մէջ այնքան ուժգնորէն, որքան մարդը կըրնայ, և զորս պիտի վերլուծէ գիտնականի, հոգեբանի խորունկ հմտութեամբ և թափանցող զննողութեամբ:

Արդէն այս տեսակ խորքի կարողութեամբ պէտք է առաջընէ պատրաստուած ըլլայ մարդը, գիտնայ թէ ի՞նչ է այն զգացումը՝ որուն շուրջը կը դառնայ խաղը, և ոչ միայն գիտնայ, այլ ճանչնայ, զգայ միանգամայն. ասիկա Շէքսպիրի խօզին տիրական նկարագրին է, և առանց աւելորդ մենք զինքը պիտի չփոթենք այսօր հրապարակի վրայ վիտապող չլատ մը սիրային խաղիւրէ հետ, Ու մենք դեռ պարզապէս կարողաւ մասին կը խօսինք. գաղտնք ներկայացնելու չամար, մեր դերասանները թող երեւակային թէ մինչեւ ուր բարձրանան կարգաւոր է: Պէտք է աչքերնիս սրուած

ըլլայ խորունկը տեսնելու, պէտք է զգացած ըլլանք, գաղափար մը ունենանք սիրոյ, նախանձի վրայ, պէտք է ճանչնանք Շէքսպիրի թատրոնը, Սաքսոն ժողովուրդը, Մարիտանային, վերածնութեան շրջանը, ու այն ատեն միայն կրնանք վայելել Շէքսպիրի բոլոր հրապարկը:

Առանց երկար առատանելու «Օթէլլոն» նրբութիւն վրայ, որ արդէն ընթացողին ծանօթ է, մտնենք ուղղակի նկարագրներուն զանազանութեան:

Շէքսպիր քանի մը տիպարներ քատելով է, որոնք ամենէն կատարելաբար են մարդը ներկայացնողներուն մէջ: Աստուծէ են «Օթէլլոն» մէկ քանի տիպարները. Օթէլլոն մէջ նախանձը ուժով է և անուրի դորութեամբ գուրս պիտի ելէ: Շէքսպիր մեղի պիտի ցուցնէ նախանձով դառնացած ու թոյնով խառնուած սէրը, նաեւ վերջով լիցուն հոգին, որ քիչիքալիան շնացողի մը յատկ ու անխախտ պատկերին դէմ գտնուել կարծելով, Եակոբ Երաքանչիւր խայթիչ խօսքերուն, կը գոռայ ինչպէս մարդ մը աննշանիւն վրայ, Օթէլլոն քով Եակո ամենէն ստակալի դէմքն է: Ռոմէո ժիւլիէթի սիրով լիցուած ինքզինքը կը սպաննէ դամբանին մէջ, երբ սիրուին մեռած կը կարծէ. իսկ Օթէլլոն՝ նախանձով սնած՝ ամեն վայրկեան իր սիրուելին շարժումները զիտելով տարօրինակ մեկնութիւններ կուտայ անոնց, կը կատարի անոր իւրաքանչիւր բառէն և վերջապէս կըսպաննէ զայն, իբր զո՞ր իր անզուպ նախանձին: Օթէլլոն ու Եակոբ քով, երրորդութիւնը ամբողջացնելու համար, ահա Տէլլոն մտնան. նախանձի հրեշտակը, երբ գլխաւոր զիցազները խաղին, և միայնգամայն մարդկային երեք անձան տիպարներ:

Օթէլլոն Մարիտանայի քաջ մըն է, որ իսպախ եկած ու վէճակիկ իր խանին տրամադրութեան տակ զրան է իր ուժը. իր մզած պատերազմներով ու քաջութեամբ մեծ համարում վաստակած ու բարձր աստիճաններ հասած է: Պրապանտիոյ տան մէջ, ուր Նիբրնկայուած է, Օթէլլոն իր շահասակութիւնները, ծովազնիկ կեանքն ու արկածները կը պատմէ: Ինք գեղեցիկ չէ, նաեւ չունի իր մասնակի բարբերուն յատուկ նրբութիւնը, բայց իր գաղափարները քան յափշտակիչ է, իսկ պարկետութիւնն ու քաղցրութիւնն այնքան բարձրիչ որ, Տէլլոն մտնան երբ պատմութիւնը կը լսէ, կը քաջանայ, ու կը սիրահարի մանկական սիրով Օթէլլոն ալ զայն կը սիրէ, բայց անարժանութեան գլխաւորութիւնն ունի: Այլը ստիպան երկուսէն յետոյ է, և Տէլլոն մտնան ամէն ինչ այն համարներով, կը ձգէ հօրը տունը և ինքզինքը կը յանձնէ Օթէլլոնի:

Բայց Օթէլլոն և Տէլլոն մտնան իրենց սէրը չի պիտի կրնան վայելել, իրենց երջանկութեան մէջ մէկը պիտի մընէ ու պիտի խանգարէ զայն, պատճառ դառնալով դժոխային տեսարաններու: Գրեթէ միշտ վէպերու և թատերգութեանց մէջ այս յատկանական տիպարը կայ, որ երկու երջանկներու մէջ մտնելով, կարելի է խանգարէ անոնց կեանքը. ասիկա ժրձազիլ է: Բայց Շէքսպիրի մէջ այդ բանաստեղծ եղբնազորձի տիպարը այնքան բնական է, այնքան կենդանի ու իրական որ, հետո ծիծաղելի ըլլալով, ամենուն ատելութիւնը կը զբոսնէ իր դէմ, հիացում պատճառով այն հանճարին՝ որ կարողացած է այդ կնճառ ու նենգամիտ հոգին իր ամբողջութեան մէջ պատկերացնել, այնքան իրական ու անքն մարդկային կերպով և Եակո կատէ Օ.

«ԿՐԱԿՈՏ ԶՈՒՐԸ»

(Միքիլի կեանքի ից)
(Թարգ. ռուսերէնից)
Ա.

Անգանի քովը նստել է վաճառական Լանդուրը, իսկ սրա մօտ խնդրողի համեստ զիրքով կանգնած է մի երիտասարդ սամօղի:

Լանդուրը լաւ ծանօթ է ամբողջ Տունդրայի հետ և նա Տունդրայի մէջ նստանքի բերանից մինչեւ Տաղաքնակով ըստը ցեղերի խրակները, սամօղիները և զօղանքները միայն գամայն բարի և չար ողին է: Նա անօթիներին հաց է ցրվում և մերկերին զգեստ և արքածներին ուրախութեան աղբիւր՝ օղի. և երբ նա տալիս է, նրա դէմքը ճիշտ այն բարի ու գուր կերպարանք ունի, որը երբեմն հովանաւորում էր Տունդրայի վայրերի ընակիչներին պապերին, որոնք կուշտ կերպով և առանց հիւանդութիւնների ու վտախ պարտութիւն անմեծներին ամայութիւնների մէջ: Բայց երբ Լանդուրը գնում է վայրերի կայանները շնիկներ ու աղէկներ հաւաքելու, այնժամանակ նրա դէմքը ահաւոր և սպառնական է, ինչպէս այն շար ոգիներինը, որոնց դէմ Շամանները(2) մաքառում

են անէ՛ծքնե՛րով հրաշագործ թմբուկի աղմուկով: Չար ոգու հետ կուէլլաւաւելի զիրքին է, քան Լանդուրի շամանների պարերն ու անէ՛ծքնե՛րը ոչ մի կերպ Լանդուրի ճանկերից չեն ազատի Տունդրայի այն մարդին, որը կը մտածէ իր պարտքը չը վճարել կամ թէ իր մէքը բերած նիւթը տիրական աչքից թողցնել:

Լանդուրը կը գտնէ պարսականներին Տունդրայի խորքերում, կանանց և երիտաներին գերի կը տանի, ինչպէս երբեմն անում էին տիրակաւառող ահաւոր կողակները:

Բայց Տունդրայի բնակիչները երբեք անընդհատ չեն երբ Լանդուրի դէմքը հաց տուած միջոցին փայլում է բարութեամբ, նրանք չեն մտածում այն սարսափելի բոլոր մասին, երբ այդ դէմքը լինում է ահաւոր, անխնայ և վճարելու ժամը հետո է և Տունդրայի որդիքը վարժված չեն ապագայի մասին մտածել: Նրանք սարսուռ են միայն ներկայում, նախատեսելը օտար է քնութեան որդիների համար: Բնութիւնը ցորտ է, բայց բարի է և առատօրէն տալիս է իր պարգեւները: Ամէն մէկը վերցնում է այնքան, որչափ իրեն պէտք է, իսկ պաշարի համար ոչինչ չէ վերցնում:

- Բարեւ տէր, դիմում է երիտասարդ Սամօղը.
- Բարեւ պատասխանում է Լանդուրը, անունը ի՞նչ է:
- Բոյագիր...
- Ո՞ր իւվիցն էս.

— Ավամեան...
— Դու ինձ հարիւր բուրլի ևս պարտ...

— Ոչ, տէր, ոչխոք երբէք չեմ տեսել... Պարտական չեմ:

Լանդուրը ուշի ուշով իր մոխրագոյն և ապա աչքերը մտում է Սամօղի դէմքին. կնճառում իր լայն ճակատը և աջ ձեռքով իր չէկ մօրուսը շոյում:

— Ի՞նչ հայրդ պարտ է հարիւր բուրլի: Այդ խօսքերի հետ նա բաց է անում սեղանի վրա, առջեւը դրված կարմիր գիրքը. օրի մէջ գրված են իւվայի բոլոր սամօղիների անունները: Բայց ոչ խնդրողի և ոչ նրա հօր անունը կայ այդ ցանկի մէջ, և այդ հանգամանքը կնճառներ է ստեղծում Լանդուրի ճակատում:

Սամօղը նայում է կնճառներին և անվճարողական կերպով շարունակում.
— Այո այդպէս է. շնորհակալ եմ. հիմա դու իմ աչքս կը լինես.

Այն պատրաստակարմութիւնը որով Սամօղը մտնում է լծի տակ բոլորովին չէ գարմացնում Լանդուրին, նա վարժ է այդ տեսակ բաների.
— Լաւ, ես քեզ պարտք կտամ, բայց հօրդ պարտքը պէտք է վճարու:
— Ինչպէս չը վճարել... դու պարտաթուղթը տուր... ես չի կրնար պիտի որսամ, և միշտ քեզ պէտք է տամ:
Լանդուրը նոր յամախորդի անունը ու մակնունը անցրեց կարմիր տեսուրդի մէջ, ու Սամօղին յանձնելով 50 բուրլու ապրանք և օղի պարտքը շնչակեց 150 բուրլի ու պարտաթուղթը յանձնեց նրան:

Քոյագիրը խնամքով մուրհակը պանց էլ չը մտածեց թէ հայրը երբ և ինչ պարագաներում 100 բուրլի պարտք է մնացել Լանդուրին, նա հոգու խորքում համոզված է թէ հայրը պարտք չունի, բայց այժմ անցնալը և ապագան նրա համար դոյութիւն չունին. նա սարսուռ է ներկայում և նախապէս ճշտակում է այն երջանկութիւնը որ պէտք է պատճառէ ապրանքի և օղի աչք դառնալը, ու բուրլովին մտածելու արամող իր չէ որ նրանց փոխարժեքը երեք անգամ աւելի պէտք է վճարէ, ինչ հոգ... մի եւնայն է. մէկին պէտք է վճարել: Բայց սամօղիները վճարում են, ամենքն էլ տէրեր ունեն. նրանք ոչ իրենց, այլ տէրերի համար են թափառում ստունդրաների մէջ և վարձագաններին հաւանում և նրանք յորմարով են սարկութեան և չեն կը կարող հաւակնալ թէ ուրիշ կերպ կարող է լինել: Բայց ինչն է դրանց սարսուկ դարձրել. Վիթէ տունդրաներում քիչ թվաքանակ, երկներ, ձուկ կամ, որոնցով կարելի է կշտանալ:

Քիչ էն արդեօք թատու գաղանքներ, որոնց մարթեղով կարելի է մարմինները ծածկել, միթէ ընդարձակ շնչու ապրանքութիւնները եղջերուներին հետ թափառելու համար:

Նրանց սարուկներ դարձրել են նոր սովորութիւնները, որոնց անասնօթ էին իրենց պապերը: Այժմ ծրոխախտի, թէյի, գինու պէտք ունին առանց դրանց եօլա գնալ չեն կարող իսկ այդ անենը շատ թանկ են:

(Շարունակելի)

(1) Միքիլի կանցնելով.
(2) Սամօղիների քորմուրը:

Քլլուն, որովհետև անոր ստորագրութեան է ու ստասիկ կը նախանձի անոր, ինք խիստ ճարպիկ է, բայց բարձրութեան հասնել չի կարողանալով, կարճամարտէ, կտակ չունիսկ ամեն անոնք՝ որոնք կարողացած են իրմէ բարձր ըլլալ: Ամէն բան կը ծագրէ, համբաւ, սէր, պատիւ, առաքինութիւն անարժէք բաներ են իրեն համար, ասէն ինչ կը քննադատէ, կը պղծիկոնէ, կարճամարտէ: Տէգալմոնան՝ իրեն համար վաւաշուս կին մըն է, Օթլլուն՝ կատաղի ցուլ մը, Խոտրթիզոն՝ էջ մը գոր կը համեմատու կը ծծեն: Կիրքերը իրարու քաղիկ աւալով կը զրոյնու: Միշտ ազատութեան կը զննէ, կատաղի, խորամանկ ու նենգամիտ մըն է և զարհուրելի յատակագիծ մը պատրաստած է երկու երջանիկներուն սքանչելութիւնը փութացնելու և նախաձեռն մտնացանելու համար զանոնք: Եակօ ամենին զժողովին արարածն է:

Օթլլուն կը սիրէ զինքը, եւ իր աննէն հաւատարիմ ու անկեղծ պաշտօնեան համարած է զայն: Օթլլուն այս բարեկամութիւնն իսկ կը վիրատրէ Եակօն, տեսակ մը ստորնութիւն կերեւայ ան իրեն: Ասկէ զատ կը կարծէ որ Օթլլուն ժամանակին իր ընտանիքին հետ մոյար յարաբերութիւններ ունեցած է: Այն յատակագիծը զոր կը կազմէ իր տիրոջ երջանկութեան մէջ թոյն խտանելու համար, զժողովին է պարզապէս: Այն մէկ շարագործ այժ քան լաւ ըմբռնած է ոճիրը, որքան Եակօ իր յատակագիծը գործադրութիւնը առաջին տեսարանին մէջ իսկ կերեւայ, ու իր առաջին քայլը այնպէս մըն է՝ որ հանդիսատեսին իսկոյն վրձնելու կուտայ հողիին րոյր թոյնը, իայց Օթլլուն մէջ ոչ մէկ տարակոյս չի թելագործ: Եթէ յանկարծ Տէգալմոնան արէ, չըլլար, պարագաները անանկ մը կը կարգադրէ որ, Օթլլուն ինքնիրեն կասկածի, օգուտութիւն չի, կըսէ անոր, աչքէ մի հեռացնեն: Այսպէս պղտիկ խօսքե-

րով կասկածը, տարակոյսը կը ծնի Օթլլունի սրտին մէջ, որ արդէն սիրած է բորբոքիլ:

(Շարունակելի)

ՌՈՒՄԻՈՑ ԿԱՏՈՒԹՅՈՒՆ

Պինդանտիոյ մէջ խուզարկութիւններ և ձերբակալութիւններ տեղի կունենան և մարտի 4-ով կասր զինուորական գրութեան վերածուած է, մանաւանդ հայաբնակ գաւառները ու բազմաթիւ հայեր կաթողութիւն, հայ գաղթականները բռնութեամբ ուսահայտակ կը գրուին:

Լեհաստանի մէջ մեծ խլրտումներ կան: Լարսովիայի մէջ ընկերակալականներու գաղտնի արկարան մը գտեր է ոստիկանութիւնը, որոս խուզարկութեան միջոցին գրաշարները ատրճանակ պարպեր են ոստիկաններուն վրայ և անոնցմէ մին սպաններ են, իսկ մէկ քանին վիրաւորեր ծանրապէս: Ոստիկանութիւնը ընկերակալականներու տները խուզարկած ատեն գտեր է շատ մը կոշեր և կարմիր սրտակներ, քանէն աւելի ընկերակալականներ ձերբակալուած են: Ձերբակալուածները զինուորական գատարանին պիտի յանձնուին: Կը վախցուի որ մայրի մէկին արիւնայից մը տեղի ունենայ ընկերակալականներու կողմէն:

Ոստիկանութիւնը խիստ միջոցներ ձեռք առած է, զինուորներէ պահպաններ գրուած են փողոցներու մէջ:

Բացի Վարսովիայէն Լոտղ և ուրիշ արդիւնագործական քա-

ղաքներ պատերազմական վիճակի մէջ գրուած են:

Ռուս ընկերակալականներն ալ խաղաղ չեն մնար: Այնպէս որ կառավարութիւնը զլուխը կորսընցուցած է:

Մէկ կողմէն պատերազմին սուկալի տաղնապները զինքը կը զբաղեցնեն, միւս կողմէն ներքին զմոհներու ակնյայտի րմբոստ տրամագրութիւնները: Անցեալ անգամ Պարսկաստան արդէն մատնանշած էր և բարձր պաշտօնեաներու մէջ եղած յարաբերութեանց յարուած վիճակը:

Այսօր թերթերը կը հարգեն որ Մայրապոյն Արեւելքի ցամաքային զորքերու հրամանատար Քուրբանթիւնի և փոխարքայ Ալեքսիսի հանդիպումը շատ ցուրտ եղած է: Առաջինի Մուգուէն հասած միջոցին փոխարքան չէ ըստ հաճած կայարան ելթալ զայն զիմաւորելու և կը կարծուի որ աս երկու կարիւր պաշտօնեաները չը պիտի կարենան իրարու հետ հաշտ ապրիլ:

Ռուսական արտաքին գործոց նախարար Լաւոտորֆ շրջաբերականով մը հարցորդած է մեծ պետութեանց որ Ռուսիա հաշտութեան համար միջնորդներու պէտքը չի պար:

Ռուսական թերթերը, մասնաւորապէս Վրէմիսի շատ զոհ են այդ մասին, և կը յայտարարեն որ ժողովուրդը շատ ոգեւորուած է այդ շրջաբերականի սգիէն:

Մէկ խօսքով անյաղթելի կարծուած Ռուսիան մեծ տաղնապներու մէջ կը գտնուի: միակոյսը որ կորսերն այն է թէ ոչ կամ կանուխ ճարտնայինը պիտի յաղթուին:

Սակայն ցամաքէն ալ ազէկ լուրեր չեն գար: ծայրագոյն արեւելքէն եկած հեռագիրներէն կիմացուի որ արդէն ճարտնայի յաջողութեան Եակօն անցնիլ և ուստերը ստիպուեր են ետ քաշուիլ: Նոյնիսկ բաւական զոհեր տալով:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Թաղական խորհուրդս կը փութայ հրապարակաւ իր ջերմ շնորհակալութիւնը յայտնել Մշեցի Արտ. Տէր Յակոբ քահանայ Տէր Յակոբեանի որ իրեն եղած հրաւերն ընդունելով յօժարակամ փութաց զալ քաղաքս և Ձատակական տներու առթիւ հոգեւորապէս միութեանց բարեպաշտ ժողովուրդը:

Ի գիտաց թաղ. Խորհրդոյ Սահմանադիր Ատենապետ Ն. Գ. Քեսսակեան և Ազնաւորեան (Կնիթ) 20 ապրիլ 1914 Վառնա

ՆԱՄԱԿ ԽՄԲ. ԳՐՈՒԹԵԱՆ

Մարտի 24 մարտ 1904

«Մարմուճում տպուած էր, որ պէս թէ Մարաշայում թատրոնից ստացուած փողերը գործածում են կուսակցական և այլ նպատակներին համար, և կամ տրուում են զէնքերի: Սուտ և անհիմն են այդ անզեկութիւնները. այստեղ բացի զպրոցի, գրագարանի և բեմի օգտին տրուած ներկայացումներին, այլ նպատակով ներկայացում ընաւ երբէք տրուած չէ:

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄԾԱԿՈՒ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄԷՆ ԱՌԱՋ

(Շար. Ասխուրդ Բիւլի)

Որքան ճշմարիտ է Արժուոյնի այս որակուած մեր կրօնաւարական լրագրութեան վերաբերմամբ: Այսօր իսկ մեր առջեւ գոյութիւն ունի սա շատ ծիծաղելի երեւոյթը. կարգ մը թերթեր, սեղէա հասարակութեան կոյր նախապաշարութեան կամաւոր գործակալները, հասարակութիւնը շրջապատու կամ խափուութիւն համակրութիւն մը ձեռք բերելու ապիկար մտահոգութեամբ, իրենց ճակատը կը զարբարեն անկողնակալութեան կամ անկախութեան տխուր յայտարարութիւններով: Անոնք ոչ որոշ սկզբունք կը գաւանդեն, ոչ յայտնի ծրագիր ունին, ոչ խորհուած, զժողովուրդը իրեն և մէկ քամիի առիւտ գլուխ կը ծնեն, ամէն հոտանքի հետ կը քշուին, կերթան, բոլոր մասնաւորներն քանի մը թերթ աւելի ծախելն է, քանի մը յաճախող աւելի սիրաշահելը: Գաղափարի սրբութիւնը կոչուած նուիրակալութիւնը իրենց մտահոգութեան առարկայ չըլլար երբեք. ամէն սրբութիւն սձուրդի կը հանեն, եթէ զին տուող գտնուի:

Այս անհամ ու անհոտ լրագրութիւնն է որ արտասահմանի մէջ, նքղութիւն «անկողնակալ ու անկախ» ուսուցիկ անունը սալ կը յաւակնի. հոն ամէն գրող օղջին շահերուն համար կը գրէ անկողնակալութիւն, ամէն խնդիր հանրութեան համար կը յազուի: միշտ «անկողնակալութիւն», հոգ չէ թէ այսօր պաշտպանուած սկզբունքը վաղը ոտնակոխ եղած ըլլայ, եւ յաճախ, նոյնիսկ միենայն թուին մէջ ինքզինքին հակառակութիւնը տրիլ:

Մեղի համար, այդ տեսակ թերթերը անկողնակալութիւնը կորակուին: Բայց, բարեբախտաբար, այսօր հասարակութիւնը զգուշացնու գարգացած է եւ զիտէ անգոյն ու ներգործող թերթերը իրարմէ զանազանիլ ու իւրաքանչիւրին իրեն յատուկ նշանակութիւնը սալ: Կարճ տատանումէ մը մը կտրուած, մանաւանդ արտասահմանի հայ հասարակութիւնը վերջապէս գիտցաւ արհամարհել անպոյն լրագրութեան վայրցիկը, եւ եթէ զիտ բողբոջին չէ քննուած ան հրապարակէն, չէթ իր ազդեցութիւնը անհամեմատ կերպով չկործարած ու անկողնակալ գաղափարուած է:

Հոս կը վերջացնենք Գրիգոր Արժուոյնի գործունէութեան առաջին շրջանը, ինչպէս ուշադիր ընթերցողը

նկատեց անշուշտ, դեռ այդ շրջանին մէջ իսկ, Արժուոյնի գրիթէ օջափած է մըր հայ ազգութիւնը չահագրգռող քոյր կենսական հարցերու Դեռ հետու իր հայրենիքին, իր գործունէրը ընկալան է որ լոկ ընդհանուր գծեր պիտի ներկայացնէին: Կեանքի իրականութիւնը, սոսուեայ զէպրիու շաղկապուած չիլիւր դեռ, որ իր խորհրդածութեանց աստղծր հայթաղէր, անոնց միտն ու ոսկրը կազմեր:

Այսուհանգերձ, այդ շրջանին մէջ իսկ, կերեւայ ապագայ Արժուոյնի, անկախ, բուռն ու կրակոտ, խիստ մտրուող, անխնայ քննադատող, ազատ ու անկաշկանդ մտածող, ժողովրդին, բուն արհամարհուած ժողովրդին իրաւունքներն ու շահերը խտր. պաշտպանող Արժուոյնի: Մենք սրղէն տեսնուք որ շարունակաբար ժողովուրդը կը գրչէր, ու հասարակական գործիչի թախ կը ճանչնար միմիայն ժողովրդին նուիրուիլու տանոր յառաջագման աշխատելը: Թէեւ դեռ անփորձ, բայց ի բնէ սրամիտ ու աշխուժ էր:

«Բնութիւնը — կը գրէ Լէօ իր գրքին մէջ — նրան տուել էր աշխուժ, սպաւորուող բնութիւն, նրա սուր հայեացքից չէին խուսափում հասարակական հարցերը, կրթութիւնը

գարձրեց նրան ստաշադէմ, համարձակ, յեղափոխիչ գաղափարների համարված զինուոր. եւ նա դուրս եկաւ մեր մէջ. Ոչինչ չի կարողացաւ սրգելք դառնալ նրա առջեւ. ոչ մասկուլիւրից ստացած օտար կրթութիւնը, ոչ մայրենի լեզուի խորթ լինելը, ոչ փակված կեանքը հայրենի տան մէջ և կամ երկար բացակայութիւնը հայրենիքից»:

Նա պատրաստվեց, կազմակերպվեց, ընթերցող հասարակութեան աչքի առջեւ: Սկսեց կրթութեան և գաղափարակութեան հարցերով, ուր երկչոտութեամբ, անվարժ երիտասարդի անվճռողականութեամբ էր դատապարտում հայրենի նախապաշարունակները. և քայլ առ քայլ առաջանալով նա եկաւ հասաւ այնտեղ, ուր արդէն որոտում է հօշի եսամոլութեան, արտաների դէմ...:

Այժմ նա բողբոջին պատրաստ է: Այժմ սեպհական գործ է ստեղծում իրեն համար. Այժմ նա արդէն սպասում է Մշակ հրատարակելու թոյնտուութեանը: Հիմա գալիս է Մշակի Գրիգոր Արժուոյնին:

Ու մենք ալ ջանանք անկա հասկնալ:

(Շարունակելի)

Յարգ տրած ներկայացումները փողերն էլ 14 դերասանները ստորագրութեամբ և ամենամանրամասն հաշուով յանձնուել են մեզ. նոյն սիրողների ղեկավար պ. Ա. Տր. Վարդանեանի պաշտօնական նամակով և ուղարկուել նորան մեր կողմից ստացական:

Ինչքանով ենք տպել այս ի գիտութիւն:

Անդամք Մարազացի գործակալական խորհրդի:

Նախագահ՝ Գ. Բն. Պետրոսեան
Փարսիլի Էմակոյրքեանց
Մեյքոն Հայուն
Պետրոս Եսայեան
(Կնիք)

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Ստացուեցաւ մարտ ամսի «Դրօշակը», որ պաշտօնապէս կը յայտարարէ Հ. Յ. Դաշնակցութեան ընդհանուր պատգամաւորական ժողովի տեղի ունենալը, փետրվար և մարտ ամիսներու մէջ: Այդ պաշտօնական ղեկուցման մէջ կայ նաեւ այն որ այսուհետեւ, բացի Թիւրքիայէն, «Դրօշակ» ստանալ ուղղը պէտք է Եւրոպոյ մէջ տարեկան երեք ֆրանք վճարէ, Ռուսաստան և Կովկաս՝ երկու րուպլի, Ամերիկայ կէս տուար, Պարսկաստան մէկ թուման:

Նոյն համարին մէջ ղեկողութեան Պատենի և Տէլի-Պապայի անցեալ տարի ինկած և կորուսած հայ հերոսներուն պատկերները:

— Կովկասեան հայկական ինքնապաշտպանութեան կոմիտէն, նկատելով որ քանի մը հայեր ստորաքարշ դիրք բռնած են դէպքի հայութիւնը հալածող ռուս կառավարութիւնը խիստ ազդարարութեամբ մը կը զգուշացնէ այդ պիտիները, սպառնալով իրիստ միջոցներ ձեռք առնել ստորնացող հայերուն հանդէպ:

— Անգլիական դեսպանատունը ջանքեր կը թափէ Վարդգէսը հովէ ոչ բոլորովին ազատել, գոնէ չը թողուլ որ մահուան պատժի ենթարկեն:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Յ Ո Ւ Ր Ք Ի Ա

Պոլսոյ մէջ կրկին սկսած են հայեր ձերբակալուել. կը կարճուի որ այդ կապ ունի Սասունի և Մշոյ մէջ տեղի ունեցած հայկական շարժումներուն հետ:

Օրմանեան պատրիարքը բողոքած է Բարձր. Դռան փոքր Ասիոյ հայերուն դէմ ձեռք առնուած խիստ միջոցներուն պատճառաւ:

— Բարենորոգիչ պետութեանց դեսպանները պնդած են որ Բ. Դուռը կարգադրէ Մակեդոնական ժամտարմաներու ռոճիկին վերաբերեալ դրամական խնդիրը:

Դուռը ապահովուցած է որ այդ խնդիրը շուտով պիտի կարգադրուի:

— Բ. Դուռը կը հերքէ այն լուրերը որոնք կը տեղեկացնեն թէ Եւսկիւբի մահմետականները հակառակ են Եւրոպացի սպաներուն:

— Փէնէրալ տ'ճորճիս քննած է Սելանիկի ժամտարմաներուն զօրանոցները, պահականոցները և վարչութիւնները և զանոնք շատ գէշ վիճակի մէջ գտած է:

— Սուլթանը մեծ փափաք ունի որ իշխան Ֆէրիտեանտ Պոլիս երթայ. կը խօսուի նաեւ որ շուտով պիտի ստորագրուի այն պայմանագրութիւնը որուն համաձայն մակեդոնացի զաղխականները պիտի վերաբնակուին իրենց ծննդավայրերուն մէջ:

— Աթէնքի թերթ մը կիմանայ թէ Բ. Դուռը պահանջած է որ Զմիւռնիոյ օտար հիւպատոսները քննութիւն մը կատարեն, հասկնալու համար թէ արդեօք պէտք է որ Թուրքիան բաւարարութիւն ապ Յունաստանը, վերջինս հիւպատոսին քարտուղարի հետ պատահած միջադէպին առթիւ:

— Յոյն կառավարութիւնը կը պահանջէ որ Զմիւռնիոյ նահանգապետին քարտուղարը երթայ յոյն հիւպատոսարան և ներողութիւն խնդրէ: Կը պահանջէ, նաեւ որ մեղաւորները պատժուին Բ. Դուռը համաձայն իրաւարարատեան մը հիմնել միջադէպերուն խնդիրը լուծելու համար:

— Բ. Դուռը յոյն դեսպանին յայտնած է որ իրենք մեղաւոր կը գտնան Զմիւռնիոյ յոյն հիւպատոսին գործակատարները: Յոյն կառավարական շրջանակներու մէջ կը կարծուի որ յարաբերութիւնները պիտի գէշնան, եթէ թուրք կառավարութիւնը ղեկավարուի այդ տեղեկաբերով:

ՌՈՒՍ—ՃԱՐՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Թօկիոէն ապրիլ 18ին Լօնտօն կը հեռագրեն թէ ճարոնական երկրորդ ամբողջ զօրաբանակը Եւրոպայէն անցնելու վիճակի մէջ: Նախքան լուսանալը ճարոնացիները լրացուցեր են երկրորդ կամուրջի մը շինութիւնը: Նոյն գիշերը ճարոնական ուրիշ երկու զօրաբանակներ անցեր են Մանչուսթր: Գլխաւոր ճակատամարտը առաւօտեան պիտի սկսի: Ռուսները 80 հազար զօրք ունին: Քանի մը տեղեր արդէն կոխը սկսուած է:

— Պատերազմին գաշտեն հասած լուրերը կը հաստատեն թէ ճարոնացիները Եւրոպայէն քով յաղթեցին: Պաշտօնական տեղեկութիւններ գեռ ստացուած չեն:

— Թօկիոէն Լօնտօն կը հեռագրեն ապրիլ 18ին որ ճարոնացի-

ները գրաւեր են Քիւլիէնշիմք, որը Եւրոպայի ճախափին Ռուսական գործադրութիւններու բանակին կը համարուի: Ռուսները պիտի նահանջեն ճարոնացիները յոյս ունին որ պիտի յաղթեն այդ ճակատամարտին մէջ:

— Թօկիոէն Պէրլին հասած պաշտօնական հեռագիր մը կը ծանուցանէ հետեւեալը:

«Անցեալ երեքշաբթի ճարոնական զօրքերը սկսան յարձակողական դիրք բռնել լուրջ ճակատամարտով մը: Ճակատամարտը տեւեց երեք օր. այսօր, կիրակի, վճռողական ճակատամարտը կը սպասուի»:

— Ճարոնացիները բոլորովին անցեր են Եւրոպայէն. զօրքերը ճախափին կենտրոնացած են. Երկուսն կախը մեծ չափեր առած է. անոր մասնակցեր են ճարոնական թնդանօթաձիք զօրքը, Բօրէայի եղբրքէն. կիրակի կուրը սկսաւ աւելի կատաղօրէն ճարոնացիներուն կորուստը շնչին է:

— Ռուս կառավարութեան պաշտօնական թերթը հրատարակած է Յարին հրովարտակը, ուով Սիբիրի երբորդ զօրաբանները եւս զէնքի կը կոչուի:

— Կրետի Լիօնէի և պանքալը Բարիի պատերազմները մեկնեցան Իթալիոյ սկիզբի իրենց հետ առնելով 800 միլիոն ռուբլի փոխառութեան թղթերը և պայմանագրերը կառավարութեան հետ բանակցելու համար:

— Իթալիոյ սկիզբի պաշտօնական հեռագրով կը հաղորդուի հետեւեալը. «Ապրիլ 18ին առաւօտեան ժամը չորսին ճարոնական ամբողջութիւններէ սոսկալի կրակ սկսաւ սեղալ Թօրինշիի և Բօթիէնթիեան ամբողջութիւններուն վրայ: Ճարոնացիները թուով կը գերազանցեն, իսկ անոնց թընդանօթները մեծ վնաս կը հասցունեն ռուսներուն, որ և ռուս գործող զուեաներու հրամանատարին ստիպեր են համոզուել որ անկարելի է դիրքերու վրայ կենալ. ու մէնէրալ Զասուլիչէն հրաման խնդրել նահանջելու: Զօրքերը նահանջեցին կանոնաւոր կերպով»:

— Ապրիլ 18ին Թօկիոէն կը հեռագրեն Բէօթիերի գործակալութեան հետեւեալը:

Գիշերը ճարոնիոյ թիկնապահ զօրքերը և 12րդ զօրաբանները անցան Եւրոպայ, և անցան Ռուսներու ճախ թեւը: Ընդհանուր ճակատամարտը սկսեր է լուսադէմին. ճարոնական զեռին ճախ կողմը գտնուած ամբողջութիւններէն թնդանօթները, ինչպէս և թնդանօթակիր նաւատորմից պատերազմին կը մասնակցէին: Ճարոնացիները համոզուած են որ պիտի յաղթեն. այսօր գրաւեր են Քիւլիէնշիմք, կուպուսի որ

ուսները դէպի Ֆէնիկիան շնչեցնուան ջիւն:

— Փէնէրալ Գուրօրաթիւն ևս իր պաշտօնական հեռագրով կը հաստատէ վերոյիշեալ տեղեկութիւնները:

— Վերջին հեռագիրները ճարոնացիներու յաղթութիւնը և Ռուսներու ունեցած մեծ կորուստը կը հաղորդեն:

ԱՒՏՏՐՕ-ՌԻՆԳՈՒՐԻԱ

Երկաթուղիներու երթևեկութիւնը սկսուած է Կառավարութիւնը պիտի պատժէ գործադրութիւն ղեկավարները, լայն վերջը պիտի ներէ:

— Վիէնայի մէջ գործաւորները տօնեցին Մայիս մէկը. 73 գործարուներ տեղի ունեցեր են, որոնց մասնակցեր են 60 հազար զորաւորներ, որմէ յետոյ գացեր են Բրէթարիա գարեջրատունը:

— Բրազայէն կը հաղորդեն որ նշանաւոր Երաժշտապետ շեխ Ա. տօն Տփօրակ մեռեր է Բրազայի մէջ:

Ի Տ Ա Լ Ի Ա

Հոռուէն կը հեռագրեն թէ ամբողջ Իտալիոյ մէջ տօնուեր է Մայիսի մէկը. թերթերը այդ օրը չեն հրատարակուած:

ՌՈՒՍԻԱ

Պնօվոյէ Վրեմիայի իրբութեան կէն կը հեռագրեն որ Պայպալ լի սառուցների հալիլ սկսիլը մեծ արդեւ կը հանգիստայ զօրքերու տեղափոխութեան:

— Իթալիոյ սկիզբի կը հեռագրեն որ ճարոնացիները կը ցեր ձն Մանչուսթրի մէջ իրիտակել նրկաթուղիի գիծը, բաւական խոշոր տարածութեամբ: Միջոցներ ձեռք առնուած են փութով վերաշինել վնասուած գիծը:

ԱՆԳԼԻԱ

Լօնտօնի ֆրանսական դեսպանը յայտարարած է որ Անգլիոյ և Ֆրանսոյի ներկայ բարեկամական յարաբերութեանց միջոցին այժմ ըս կարելի է Տուվր և Քալէ գետնացքով միացնել:

15 տարի առաջ այդ առաջարկը շնորհուեցաւ անգլիացիներու կողմէն:

ՖՐԱՆՍԱ

Բարիկէն ապրիլ 18ին կը հեռագրեն որ Ֆրանսական նաւորածին մը կազմուած 17 մարտական տեսակ տեսակ նաւերէ Պարոն փոխ ամիրալի հրամանատարութեամբ 7 շարժուան շրջապայութիւն մը պիտի ընէ արեւելքին մէջ, այցելելով Կրետէ, Պէլոքս, Ալէքսանտրէթ, Սելասոնիկ, Ռիբէա:

Отговорникъ
Мурадъ-Ераносянъ
Печатница „Возмимность“ Варна